ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N "ՀՀՔԿ-ԲՄԱՊՁԲ-ԲՌ-21/1.1"

ք.Երևան «01» 03 2021թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա.Նիկոյանի, որը գործում է Դեպարտամենտի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Ա. Դանիելյանի, որը գործում Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **112814100 (մեկ հարյուր տասներկու միլիոն ութ հարյուր տասնչորս հազար մեկ հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված

8.11 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ քննչական կոմիտե	«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5	ք. Երևան, Պուշկինի 1
ՀՀ ՖՆ աշխատակազմի	«Էվոկաբանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն,	Հ/Հ 1660006430550100
Հ/Հ 900011000834	ՀՎՀՀ 02665864
ՀՎՀՀ 02631263	էլ. հասցեն՝ tendercps@gmail.com
	Հեռ. (010)565281, (055)309319
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 01 » 03 2021 թ. կնքված
"ՀՀԲԿ-ԲՄԱՊՁԲ-ԲՌ-21/1.1" *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման հասցեն	Մատակարարման քանակը՝ ըստ ժամանակացույցի		
								2021թ.-ի մարտի 31	*2021թ.-ի հունիսի 30*	*2021թ.-ի սեպտեմբերի 30*
1	09132200/503	Բենզին, ռեգուլյար	լիտր	329	112814100	342900	ք.Երևան, Մամիկոնյանց 46/5	140000	102900	100000
տեխնիկական բնութագիրը										
1	Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 93 (ռեգուլյար), շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 81, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-ից մինչև 100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ3-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1 %-ից ոչ ավելի, խտությունը՝ 15 0 C ջերմաստիճանում՝ 720-ից մինչև 775 կգ/մ3, ծծմբի պարունակությունը՝ 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը՝ 2,7 %-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3 %, էթանոլ-5 %, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10 %, եռաբութիլ սպիրտ-7 %, եթերներ (C5 և ավելի)-15 %, այլ օքսիդիչներ-10 %, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»: **Մատակարարումը՝ Կտրոնային:** Կտրոնի ուժի մեջ լինելու ժամկետը պետք է լինի առնվազն մեկ տարի՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած: Պետք է ապահովվի բոլոր կտրոնների միասնականության ճանաչումը ՀՀ և ԼՂՀ տարածքներում:									

Երևան քաղաքի յուրաքանչյուր վարչական շրջանում մատակարարը պետք ունեն առնվազն 2, ՀՀ յուրաքանչյուր մարզում՝ առնվազն 3(մարզի մեծ քաղաքներում), իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում՝ Ստեփանակերտում, Ասկերանի և Մարտակերտի շրջաններում առնվազն մեկական բենզալցակայան կամ համապատասխան այլ բենզալցակայանների հետ կնքված պայմանագրեր՝ կտրոնով ապրանքի մատակարարումն իրականացնելու համար:
Բենզալցակայանների հասցեների ցանկը կցվում է:*

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ
ք. Երևան, Պուշկինի 1
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660006430550100
ՀՎՀՀ 02665864

(ստորագրություն)
Կ.Տ

Բենզալցակայանների հասցեների ցանկ

N	Լցակայանների անունը ըստ քաղաքների *		Հասցեն (քաղաք, ճանապարհ և այլն)	միջոցների տեսակը
1	1	Կենտրոն վարչական շրջան	ք.Երևան, Կենտրոն Վարդանանց փողոց 23	գույքի օգ. անհ. Պայմ
2			ք.Երևան, Հերացի փող.2/5	վարձակալ.
3			ք.Երևան, Մյասնիկյան պող.5	վարձակալ.
4	2	Աջափնյակ վարչական շրջան	ք.Երևան, Լենինականի 15/5	գույքի օգ. անհ. Պայմ
5			ք.Երևան, Աջափնյակ Մազմանյան փողոց 1/8	գույքի օգ. անհ. Պայմ
6			ք.Երևան, Շինարարների 11/1	գույքի օգ. անհ. Պայմ
7	3	Արաբկիր վարչական շրջան	ք.Երևան, Արաբկիր Հ.Քոչարի փող. 49/2	գույքի օգ. անհ. Պայմ
8			ք.Երևան, Արաբկիր Թբիլիսյան խճ. 1/19	գույքի օգ. անհ. Պայմ
9			ք.Երևան, Արաբկիր Աղբյուր Սերոբի փողոց 52/7	գույքի օգ. անհ. Պայմ
10			ք.Երևան, Կոմիտաս 35/6	գույքի օգ. անհ. Պայմ
11			ք.Երևան, Կոմիտաս 60/4	գույքի օգ. անհ. Պայմ
12	4	Դավթաշեն վարչական շրջան	ք.Երևան, Սասնա Ծռեր փողոց հ. 2/3	գույքի օգ. անհ. Պայմ
13	5	Էրեբունի վարչական շրջան	ք.Երևան, Էրեբունի Արցախի փողոց 15/11	գույքի օգ. անհ. Պայմ
14			ք.Երևան,Մ. Խորենացի 148 և 150 տների դիմաց	վարձակալ.
15			ք.Երևան, Էրեբունի 6	վարձակալ.
16	6	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	ք.Երևան, Սեբաստիա 157	գույքի օգ. անհ. Պայմ
17			ք.Երևան, Մալաթիյա Սեբաստիա Սեբաստիայի փողոց 110/1	գույքի օգ. անհ. Պայմ
18			ք.Երևան, Իսակով 27	գույքի օգ. անհ. Պայմ
19			ք.Երևան, Բաբաջանյան 54	գույքի օգ. անհ. Պայմ
20			Լենինգրադյան փողոց հ. 31/1	գույքի օգ. անհ. Պայմ
21	7	Նոր Նորք	ք.Երևան, Նոր Նորք Գյուլիքեխվյան փողոց 2/1	գույքի օգ. անհ. Պայմ

22		վարչական շրջան	ք.Երևան, Լյուքսեմբուրգի 36/3	գույքի օգ. անհ. Պայմ
23			ք.Երևան, Թևոսյան 97/2	գույքի օգ. անհ. Պայմ
24	8	Նորք Մարաշ վարչական շրջան	ք.Երևան, Արմենակյան փողոցին հարակից հասցե	գույքի օգ. անհ. Պայմ
25	9	Շենգավիթ վարչական շրջան	ք.Երևան, Թամանցիների 67/1	գույքի օգ. անհ. Պայմ
26			ք.Երևան, Իսակով 11/1	գույքի օգ. անհ. Պայմ
27			ք.Երևան, Արշակունյաց փող. Կոմիտասի անվ Այգու դիմաց	գույքի օգ. անհ. Պայմ
28			ք.Երևան, Արտաշիսյան 34	գույքի օգ. անհ. Պայմ
29			ք.Երևան, Արշակունյաց 57	գույքի օգ. անհ. Պայմ
30			ք.Երևան, Շենգավիթ Շիրակի 2/8	գույքի օգ. անհ. Պայմ
31			ք.Երևան, Շենգավիթ Արշակունյաց պողոտա 37	գույքի օգ. անհ. Պայմ
32			ք.Երևան, Շենգավիթ Արշակունյաց պողոտա 272	գույքի օգ. անհ. Պայմ
33			ք.Երևան, Շենգավիթ Նորագավիթ 1-փող. 2/5	գույքի օգ. անհ. Պայմ
34	10	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան	ք.Երևան,Դավիթ ԱՆհաղթ փ. Ավտոբեռնիչների	գույքի օգ. անհ. Պայմ
35	11	Ավան վարչական շրջան	ք.Երևան, Ավան Ռուբինյանց փողոց 58/1	գույքի օգ. անհ. Պայմ
36	12	Նուբարաշենի վարչական շրջան	ք.Երևան, Էրեբունի Հ.Այվազովսկի 25	գույքի օգ. անհ. Պայմ
			ք. Երևան, Նուբարաշեն փող. 6, 1/11	գույքի օգ. անհ. Պայմ
37	13-Կոտայք	Աբովյան	ք.Աբովյան, Արզնու խճ.1	գույքի օգ. անհ. Պայմ
38			Կոտայքի մ-զ,գ.Վ.Պտղնի "Բոյնի" տ.	գույքի օգ. անհ. Պայմ
39		Հրազդան	Մարզ Կոտայք, համայնք Հրազդան ք. Վանատուր թաղամաս Հայ Ֆիդայիների փողոց թիվ 39 բենզալիցքավորման կետ	գույքի օգ. անհ. Պայմ
40		Եղվարդ	Աշտարակի խճ.գ.Քասախ, Աշտարակի խճ 54	գույքի օգ. անհ. Պայմ
41	14-Արագածոտն	Աշտարակ	Աշտարակ ք. Երևանյան փողոց թիվ 1/13	գույքի օգ. անհ. Պայմ
42		Ապարան	Բաղրամյան 73 Վագիֆ Մնացականյան Ա/Ձ	կտ.սպ.պ
43		Արայի	գ. Արայի Տիգրան Պողոսյան Ա/Ձ	կտ.սպ.պ

44	15-Շիրակ	Արթիկ	Ք.Արթիկ, Շահումյան 72	գույքի օգ. անհ. Պայմ
45			Ք.Արթիկ, Շիրակացի 2/10	գույքի օգ. անհ. Պայմ
46			Ք.Արթիկ, Սասունցի Դավթի 69	գույքի օգ. անհ. Պայմ
47		Գյումրի	Ք.Գյումրի, Վազգեն Սարգսյան 30/6	գույքի օգ. անհ. Պայմ
48			Ք.Գյումրի, Տերյան 120	գույքի օգ. անհ. Պայմ
49			Ք.Գյումրի, Երևանյան 173/1	գույքի օգ. անհ. Պայմ
50			Մարզ Շիրակ համայնք Գյումրի ք. Խրիմյան Հայրիկի փողոց 55/13 կիսակառույց բենզ.	գույքի օգ. անհ. Պայմ
51	16-Գեղարքունիք	Վարսեր	Գեղարքունիքի մ-զ, գ.Վարսեր	գույքի օգ. անհ. Պայմ
52		Սևան	Մարզ Գեղարքունիք, համայնք Սևան ք. Երևանյան խճուղի 29	գույքի օգ. անհ. Պայմ
53		Գավառ	Զորավար Անդրանիկի 1, Ա/Ձ Ամալյա Գևորգյան	կտ.սպ.պ
54		Մարտունի	գ. Ներքին Գետաշեն, Փայլակ Թաթոյան Ա/Ձ	կտ.սպ.պ
55		Վարդենիս	Լեռնագործների փողոց Ավետիք Հակոբյան Ա/Ձ	կտ.սպ.պ
56	17-Տավուշ	Դիլիջան	Մարզ Տավուշ, համայնք Դիլիջան ք. Մ.Գորկու փող. 54/2	գույքի օգ. անհ. Պայմ
57		Բերդ	Հարի Գրուպ ՍՊԸ, Մաշտոցի 1ա	կտ.սպ.պ
58		Նոյեմբերյան	Ուզունյան Արսեն Ա/Ձ , 27Փ, /Տ/9, Բերդավան 4107 Տավուշ	կտ.սպ.պ
59	18-Լոռի	Ստեփանավան	Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Մ.Բաղրամյան փողոց 180/1-1 բենզալցակայան	գույքի օգ. անհ. Պայմ
60		Վանաձոր	Ք.Վանաձոր, Հալաբյան 2ա	գույքի օգ. անհ. Պայմ
61			Ք.Վանաձոր, Բաղրամյան 58/1	գույքի օգ. անհ. Պայմ
62			ՀՀ Լոռիի մարզի, Վանաձոր ք. համայնք Կարեն Դեմիրճյանի փողոց 25-5/5	գույքի օգ. անհ. Պայմ
63			Մարզ Լոռի, համայնք Վանաձոր ք. Կ.Դեմիրճյան փողոց 1/2-1	գույքի օգ. անհ. Պայմ
64			Մարզ Լոռի, համայնք Վանաձոր ք. Երևանյան խճուղի 62/2	գույքի օգ. անհ. Պայմ
65		Սպիտակ	Մարզ Լոռի, համայնք Սպիտակ ք. Երևանյան խճուղի 81, վառելիքի լցման կայան	գույքի օգ. անհ. Պայմ

66		Ալավերդի	Մարզ Լոռի Համայնք Ալավերդի Ալավերդի ք. Երևանյան խճ.18 բենզալցակայան	գույքի օգ. անհ. Պայմ
67	19-Արարատ	Արտաշատ	«Սուսաննա և Ռաֆիկ» ՍՊԸ, Արտաշատ, Դալար խճ. Թիվ 2	կտ.սպ.պ
68		Վեդի	Վեդի-Վանաշեն խճ. Կարեն Սաֆարյան Ա/Ձ	կտ.սպ.պ
69		Մասիս	Ռաֆիկ Փահլևանյան Ա/Ձ, Մասիսի Նոր Թաղամաս 129	կտ.սպ.պ
70	20-Վայոց Ձոր	Ջերմուկ	ք. Ջերմուկ Երևանյան 11, Կարապետյան Արտակ Ա/Ձ	կտ.սպ.պ
71			ք. Վայք, Գորիս 2 ԿՄ Ռոբերտ Մարտիրոսյան Ա/Ձ	կտ.սպ.պ
72			ք. Վայք, Ջերմուկի խճ. 57/1	կտ.սպ.պ
73			Եղեգնաձոր, գ. Գետափ Երևանյան խճ. 3	կտ.սպ.պ
74	21-Սյունիք	Գորիս	Գորիս, Անկախության 118	գույքի օգ. անհ. Պայմ
75		Կապան	ք.Կապան, Մուշեղ Հարությունյանի 4	կտ.սպ.պ
76		Քաջարան	ք. Քաջարան, Աբովյան 13/14	կտ.սպ.պ
77	22-Արմավիր	Արմավիր	Էջմիածին - Երևան մայրուղի թիվ 2ԲԼԿ	կտ.սպ.պ
78			Երևան- Էջմիածին խճ. Ռաստր գործ դիմաց	կտ.սպ.պ
79			ք. Արմավիր Երևանյան 55 Բ	կտ.սպ.պ
80			ք. Մեծամոր Վարչական տարածք 1, Արտադրական տարածք 1	կտ.սպ.պ
81			Սուրեն Աբրահամյան ԱՁ ք Արմավիր Երևանյան փող 52, գ. Նորապատ	կտ.սպ.պ
82	23-ԼՂՀ	Ստեփանակերտ	Բաղրամյան 1/1	կտ.սպ.պ
83		Մարտակերտ	ք. Մարտակերտ, Սախարովի 35	կտ.սպ.պ

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀԿՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ
ք. Երևան, Պուշկինի 1
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660006430550100
ՀԿՀՀ 02665864

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
« 01 » 03 2021 թ. կնքված
"ՀՀԲԿ-ԲՄԱՊՁԲ-ԲՌ-21/1.1" *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	09132200/503	Բենզին, ռեգուլյար			19000000	44500000	44500000	44500000	71800000	71800000	71800000	112814100	112814100	112814100	**112814100**	

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն) Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ
ք. Երևան, Պուշկինի 1
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660006430550100
ՀՎՀՀ 02665864

(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 3
« 01 » 03 2021 թ. կնքված
''ՀՀՔԿ-ԲՄԱՊՁԲ-ԲՌ-21/1.1'' ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 01 » 03 2021 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի
''ՀՀԲԿ-ԲՄԱՊՁԲ-ԲՈ-21/1.1''

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն